


ՀԱՆԴԷՍ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ



ԳԱՐՐԻ ԿՂԶԻՈՅՆ ԿԱՊՈՒՏԱԿ ԱՆՉԱԻՐ.

ԳԱՐՐԻ ԿՂԶԻ

ԵՒ

ԿԱՊՈՒՏԱԿ ԱՆՉԱԻՆ

Գարրի անուն իտալական կղզին կը բարձրանայ Նաբոլիի հիանալի ծովագողին մէջ, համանուն քաղքին հարաւակողմը, իբր երեսուն քիլոմետր հեռաւորութեամբ: Այս կղզին որ մէկ կողմանէ միայն մերձենալի է, շրջապատեալ է բարձրաբերձ ու ապառաժուտ լեռներով. որոց ամենաբարձրն որ կղզւոյն արեւմտակողմը կ'իյնայ, ծովուն մակերևութէն 500 մետր բարձր է: Կլիմայն մեղմ է ու առողջարար, իսկ կղզւոյն մշակելի մասն թէպէտ փոքր է, բայց բարեբեր ըլլալուն՝ առատ ար-

դեամբք կը վարձատրէ բնակաց աշխատութիւնը, և կը պտղաբերէ ցորեան, այլ և այլ տեսակ պտուղներ, սզնիւ ձէթ և առատ գինի, որ թէպէտ թեթեւ են ընդհանրապէս բայց գերազանց: Կղզւոյն գլխաւոր բերոց մէկն ալ լորամարգին կը համարուի, որ ժամանակաւ այնչափ առատ էր կ'ըսեն որ տեղւոյն եպիսկոպոսին գլխաւոր եկամուտներէն մէկն էր:

Հռոմայեցւոց աանն շատ աւելի համբաււոր էր այս կղզին. կայսրն Աւգոստոս պալատ մ'ունէր հօս, ինչպէս նաև Տիրեր, որոց աւերածոց մնացորդները դեռ մինչև ցայսօր կ'երևին, ուր անցուց Տիրեր իր կենաց վերջին տարիներն՝ ի խաղաղութեան. կը տեսնուին նոյնպէս մահէնաց, շերմուկներու ու ջրանցից

մնացորդներն, յորս և Յաւերժնար-
ասնց ակննաւն: Այս ամեն աւերակ-
ներն Տիրեր անուանեալ լեռան մը գա-
գաթան վրայ են, որուն ծայրէն կը
տարածուի աչաց առջին չըջահայեաց
հիանալի տեսարան մը:

Կղզւոյն մէջ երկու աւան կայ Գաբրի
ու Անագարրի կոչեցեալ, որոց երկուքն
ալ բարակաց վրայ շինուած են, և ունին
գրեթէ հինգ հազար ժողովուրդ: Այս
երկու աւանաց մէջ Գաբրիի գլխաւոր
համարուած է, և կ'իյնայ կղզւոյն վեր-
ջին արևելեան ծայրը. ունի 300 տուն՝
փոքր բայց գեղեցկաշէն, և հինգ եկե-
ղեցի արևելեան ճարտարագետու-
թեամբ շինուած գմբէթներով: Հիւ-
նալի է իր այգեստանաց բուսաբերու-
թիւնն. ուր կը տեսնուի մինչև արմա-
ւենին իսկ սաղարթագեղ ուռնացեալ:
Տեղացիք ըստ մեծի մասին կ'ապրին
յարդեանց երկրի ու ձկնորսութեամբ:

Այս կղզւոյն մէջ համբաււոր մեծա-
տարած անձաւ մը կայ, որ մինչև ցամա-
կ 1832 անձանօթ մնացեր էր, և գրտ-
ուուեցաւ նոյն տարին և կոչուեցաւ կա-
պուսակ ակննաւ, զոր ներկայացուցած
եմբ ընթերցողաց 'ի պատկերի, որուն
գիւտն այս կերպով եղաւ: Երկու Անգ-
ղիացիք լուղալու փորձ ընելու ատեն
կղզւոյն ափուկքը, մէջերնէն մէկը ծով-
եզերքը շրջապատող քառաժայռից մէջ
քարայր մը կը տեսնայ, և առանց վախ-
նալու սիրտ կ'ընէ ու ներս կը մտ-
նայ. և ահա 'ի մեծ զարմանս կը գրտ-
նայ յանկարծ ինքզինքը տարորինակ
լճակի մը մէջ, գրեթէ քառորդ մոր-
նի ընդարձակութեամբ, և կը տես-
նայ զանձն կապուտակացեալ. վասն զի
հօս ամենայն ինչ կապուտակ է, թէ
քարերն թէ ջուրն թէ աւազն և թէ ս
և է առարկայ. որովհետև անձաւը ծո-
վէն բաժնող ժայռն գրեթէ ջրոյն հա-
ւասար իջնալուն, լոյսն կը թափանցէ 'ի
ներքս բեկբեկմամբ, անցնելով ծովուն
երկնագոյն ալեաց մէջէն, անոր համար
կը լուսաւորէ անձաւը կապուտադոյն:

Այս զարմանալի անձաւին ամենա-
բարձր գմբէթը ձևացած է բլուրեղա-

ցեալ ժայռերէ, և մուտքը շատ դժուա-
րին է. որուն համար կը գործածեն տա-
փակ նաւակ մը, որուն մէջ պէտք է ե-
րեսի վրայ տարածուիլ, և սպասել որ
նաւավարն յարմար վայրկեանն զըտ-
նալով մզէ նաւակն 'ի ներքս՝ ալեաց օգ-
նակախութեամբ: Այս փորձը երբեմն
պէտք կ'ըլլայ կրկնել բազում անգամ,
վասն զի մէկէն չի յաջողիր, և շատ ան-
գամ վտանգաւոր իսկ է: Կը պատահի
և երբեմն որ ներս մտնելէն ետքը
ջուրը կը բարձրանայ և անկարելի կ'ըլ-
լայ դուրս ելլալ մինչև որ ջուրը չի ցած-
նայ:

Բաց 'ի Կապուտակ անձաւէն կայ և
Կանաչ անձաւ այս կղզւոյն մէջ, որ և
սա նշանաւոր ու հիանալի է, որուն
մուտքն չէ այնչափ դժուարին որպէս
առաջնոյն: Այս երկրորդ անձաւն ունի
և այս առաւելութիւնը, որ յամենուստ
փակուած չէ, այլ ունի վարը պզտի
անցք մը որ դուրս կը հանէ: Այս կող-
մերը ծովը սաստիկ խորունկ է, և
կ'ըսեն թէ կը գտնուի հօն ինչուան շա-
նաձուկն:

ԲԵՒԵՌԱՅԻՆ

ՆՈՐ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆՔ՝ 1

ՆՍՈՒՍՏՈՒՔ Ֆրէյայ: — ՍՂԵՏԻ ՄԻՌՏԵՐՈՒՅԻՆ:

Քրիստիանիան նստող Գազզիլոյ հիւ-
պատն Պ. Հէփ երկու բեւեալին ճա-
նապարհորդութեանց կատարածը հրաւ-
տարակեց օրագրաց մէջ, յորոց յայտ-
նի կ'երևնայ թէ ինչպէս յաճախ ընդ-
ունայն կ'ելլեն աշխարհախնդրաց այս
տեսակ արշաւանքները:

Ա

ՆՍՈՒՍՏՈՒՔ Ֆրէյայ.

Ֆրէյա նաւը 1872ին Նորուեկիայի
այն ուժով նաւերէն էր, զոր ամեն տա-

1 Տես ԱՍ տարի, էրես 338: